ՄԻ ՀԱԶՈՒԱԳԻՏ ԵՐԳԱՐԱՆ

Երևանում լույս տեսնող «Սովետական Գրականություն» ամսագրի 1967 թուականի թիւ 1-ում Հ. Դաւթեանը «Մի հին, հազուագիւտ երգարան» խորագրով ուշագրաւ յօդուածում որոշ տեղեկութիւններ է տուել 1830 թուին Հնդկաստանի Կալկաթա քաղաքում, Սուրբ Ստեփանոսի Ջնթրումեան Աւետարանի է մրոգրաւեմբ լույս տեսած մի երգարանի մասին, ընդգծելով այսպիսի տողեր.

«Ամեն քան մեկ եւ քառորդ դար առաջ տպագրուած այդ տաղերը արտայայտում են Հնդկաստանի Հայ գաղութի հոգեւոր կեանքը, կենցաղն ու առօրեան»:

Հ. Դաւթեանի հաստատած այս տողերը չեն պատկերում եւ բնորոշում հոգեւոր երգարանի բովանդակութեան դեղեցկութիւնները: Այնտեղ արտացոլում են ոչ միայն Հնդկաստանի Հայ գաղութի, այլեւ նոր Ջուղայի Հայ ժողովրդի բանաստեղծական ձիրքը, գեղարուեստական ճաշակը, գրական արտատութիւնը, լեզուական եւ ոճական արուեստները, բարոյական յատկանիշերն ու կենցաղային ուրոյն գծերը:

Տարօրինակ է եւ այն, որ Հ. Դաւթեանն երգարանի մասին արձանագրել է նաեւ հետեւեալը. «Զարմանալի է, որ այս շատ արժէքաւոր եւ հազուագիւտ երգարանը մինչեւ այժմ զրեթէ անծանօթ է մնացել մեր բանասիրներին»:

Սակայն, ուշի դարմանալին այն է, որ Հ. Դաւթեանը Հայ բանասիրական գրականութեան գծով արժէքաւոր երգարանի մասին կատարուած աշխատանքների մասին յայտուն գաղափար չունենալով՝ «Սովետական Գրականութիւն» ամսագրում սխալ եւ անճիշդ տեղեկութիւններ է հաղորդել:

Իրականութիւնն ու փաստն այն է, որ հազուագիւտ երգարանը մինչեւ 1967 թուականն անծանօթ չի մնացել Հայ բանասիրութեանը: Դեռ երկու տարի առաջ՝ 1965 թուականին Վենեսիկի «Բազմավէպ»ի 1-3 եւ 8-10 համարներում երգարանի բովանդակութեան մասին լույս է տեսել մեր ինդամակ ուսումնասիրութիւնը, ուր կարեւոր ուսանողներն ոչ միայն մանրամասն վերլուծութեան ենթարկել, այլեւ հանգամանորեն հրատարակել են երգարանի պարկեշտ եւ հնդկերէն մի շարք սաղմոսները, որոնք երգարանում տպագրուել են հայերէն տառերով:

Այդ երգերն այսօր յատակ եւ ցայտուն պատկեր են տալիս ժամանակի ժողովրդի բերանում պատասանուող հնդկական, պարսկական լեզուների տարողութեան եւ հնչիւնարանութեան տարբերութիւնների մասին, որոնք կարող են լեզուաբանների կողմից առանձին ուսումնասիրութեան նիւթ դառնալ: Այդ տեսակէտից էլ արժանի են ուշադրութեան:

Այժմ մեր դրական արիւնում է գտնուում Նոր Ջուղայեցի Սուրբ Ստեփանոսի Ջնթրումեան Աւետարանի Հնդկաստանի Կալկաթա քաղաքում 1824 թուին խմբագրած Երգարանի ձեռագիրը, իսկ վերջերս՝ 1966 թուին, ձեռք բերինք 1830 թուին Կալկաթայում տպուած Երգարանի մի օրինակը:

Նոր Ջուղա

ԱՐԱՄ ԵՐԵՄԵԱՆ

digitised by A.R.A.R.@